

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊՅ  
ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1991-2001թթ.**

**Ժ. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

1991 թ. ԽՍՀՄ փլուզումը նախկին Միութենական հանրապետություններին, այդ թվում և Հայաստանին կանգնեցրեց սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական լուրջ դժվարությունների առջև:

Այդ վիճակից դուրս գալու համար հետխորհրդային հանրապետությունները ձեռնամուխ եղան նոր բնույթի տարածաշրջանային միջազգային կազմակերպության՝ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծմանը: ԽՍՀՄ երեք հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի ղեկավարները 1991թ. դեկտեմբերի 8-ին ստորագրեցին համաձայնագիր ԱՊՀ ստեղծելու մասին: Համաձայնագրում շեշտված էր, որ Բելառուսի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (ՌՄԴԽՀ), Ուկրաինան՝ որպես 1922 թվականի Միութենական պայմանագիրը ստորագրած ԽՍՀ Միության հիմնադիր պետություններ, փաստում են, որ ԽՍՀ Միությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարեցնում է իր գոյությունը և «Բարձր պայմանավորվող կողմերը ստեղծում են Անկախ Պետությունների Համագործակցություն» (հոդ. 1):

ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրում ուրվագծվեցին նաև մասնակից պետությունների համագործակցության ուղղությունները և ոլորտները, որտեղ նախատեսվում էր, որ «Կողմերը կզարգացնեն իրենց պետությունների և ժողովուրդների իրավահավասար և փոխշահավետ համագործակցությունը քաղաքականության, տնտեսության, մշակույթի, կրթության, առողջապահության, շրջակա միջավայրի պահպանման, գիտության, առևտրի, հումանիտար և այլ բնագավառներում, կաջակցեն տեղեկության փոխանակմանը, բարեխղճորեն և անշեղորեն կպահպանեն փոխադարձ պարտավորությունները (հոդ. 4):

- Համագործակցության մասնակից պետությունները կհամագործակցեն միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման, ռազմական ծախսերի և սպառազինությունների կրճատման արդյունավետ միջոցների իրականացման գործում: Նրանք ձգտում են բոլոր միջուկային սպառազինությունների մեկուսացմանը, համընդհանուր և լրիվ զինաթափմանը միջազգային խիստ հսկողության ներքո: Կողմերը կհարգեն չեզոք պետության և ոչ միջուկային գոտու կարգավիճակի հասնելու միմյանց ձգտումը... » (հոդ. 6):

Նորաստեղծ տարածաշրջանային միջազգային այս կազմակերպությունը Մոսկվա-կենտրոն չէր լինելու՝ քանզի համաձայնագրի 14-րդ հոդվածում նշված էր. «Համագործակցության համակարգող մարմինների գտնվելու պաշտոնական վայրը Միոսկ քաղաքն է »:

Կարծում ենք՝ վերոնշյալ երեք հանրապետությունները իրավունք ունեին ստեղծելու միջազգային կազմակերպություն, սակայն համաձայնագրում ԽՍՀՄ գոյության դադարեցման մասին նրանց հայտարարությունը իրավական տեսանկյունից ոչ լիարժեք կարող էր դիտվել: Եթե սլավոնական երեք պետությունները նման իրավունքի վերապահումը փորձում էին հիմնավորել խրենց՝ ԽՍՀՄ հիմնադիր պետություններ լինելով, ապա հիմնադիրների շարքում էր նաև Անդրկովկասյան Ֆեդերացիան, որը 1922 թ. միջազգային

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու, Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված պայմանագրեր», Եր., 2004, էջ 11:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 13:

հարաբերություններում առանձին սուբյեկտ էր, իսկ 1936թ., երբ լուծարվեց Անդրկովկասյան Ֆեդերացիան, Հայաստանի ԽՍՀ-ն, Ադրբեջանի ԽՍՀ-ն և Վրաստանի ԽՍՀ-ն՝ որպես միջազգային իրավունքի առանձին սուբյեկտներ մաս կազմեցին ԽՍՀՄ-ին: Հետևաբար, 1991թ. դեկտեմբերի 8-ի ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրում ՌԴ-ի, Բելառուսի և Ուկրաինայի կողմից ԽՍՀՄ գոյության դադարեցման մասին նման ձևակերպումը տեսականորեն չէր կարող ԽՍՀՄ գոյությունը դադարեցնելու հիմք դառնալ առանց Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և կենտրոնասիական հինգ հանրապետությունների համաձայնության: Ինչ վերաբերում է Մերձբալթյան հանրապետություններին, ապա դեռևս 1991թ. սեպտեմբերի 6-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ճանաչել էր Լատվիայի, Լիտվիայի և Էստոնիայի անկախությունը<sup>4</sup>: Մերձբալթյան երեք հանրապետությունները, դուրս գալով ԽՍՀՄ-ից, որևէ մասնակցություն չունեցան ԱՊՀ ստեղծմանը, քանի որ իրենց արտաքին քաղաքականության գերակա ուղղություն հռչակեցին ինտեգրումը եվրոպական կառույցներին և ՆԱՏՕ-ին:

ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրում շեշտված էին ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական այն ոլորտները և ուղղությունները, որոնց շուրջ պետք է համագործակցեին մասնակից պետությունները: Փաստորեն, դրանք ոչ թե նոր ոլորտներ և ուղղություններ էին, այլ մասնակից պետությունները փորձում էին պահպանել և զարգացնել ԽՍՀՄ-ից ժառանգածը:

ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը սկզբում ստորագրեցին միայն երեք սլավոնական պետությունների ղեկավարները: Ինչո՞ւ Բելովեժն չէին հրավիրվել մյուս համրապետությունների ղեկավարներ: Բոլովեժյան հանդիպումից տասն օր առաջ Ռ.Ելցինը տակավին ցանկություն չէր հայտնել հրավիրելու Ն.Նազարբաևին: Իսկ երբ ազգամիջյան հարաբերությունների հարցերով ՌԴ-ն ճախագահի խորհրդակցանք փորձել էր հիշեցնել, որ Վազախաստանում գրեթե վեց միլիոն ռուս է ապրում, և Վազախաստանն ու Ռուսաստանն իրենց տրամադրության տակ ունեն նախկին ԽՍՀՄ բնական ռեսուրսների գրեթե 90 տոկոսը, Բ.Ելցինը առարկություն չընդունող տոնով պատասխանել էր, որ իրենք (այսինքն՝ ՌԴ, Բելառուսը և Ուկրաինան) համագործակցությունը կսկսեն կառուցել սլավոնական պետություններով<sup>5</sup>:

ՌԴ Պետդումայի պատգամավոր Գ. Ստարովոյտովայի կարծիքով, Բ. Ելցինը ռատերալոյթին գտնվում էր Ալեքսանդր Սոլժենիցինի «Ինչպե՞ս վերակառուցել Ռուսաստանը» հոդվածի ազդեցության տակ, որտեղ առաջարկվում էր նախկին Խորհրդային Միության փոխարեն ստեղծել ինչ-որ մի նոր միության, ուր առաջնայնությունը տրվում էր սլավոնական պետություններին: Սակայն հետագայում սլավոնական կողմնորոշվածությունը սահմանափակվեց ընդամենը Ռուսաստանի և Բելառուսի կրկնաքանակ հարաբերություններով<sup>6</sup>:

Բելովեժյան թավուտ չհրավիրված կենտրոնասիական հանրապետությունների ղեկավարներն այն ժամանակ հավաքվեցին Աշխաբադում և հապճեպ ստորագրեցին *ինգալկոդ* պայմանագիր՝ այն եռյակով, որ հետագայում այն կմիացվի ԱՊՀ ընդհանուր պայմանագրին: Նրանք չէին ուզում դուրս մնալ «ամբողջացման» գործընթացից, թեև «մոռացկոտության» համար սլավոնական պետությունների ղեկավարներին նրբանկատորեն չէին մեղադրում<sup>7</sup>:

ԱՊՀ ստեղծումից հետո ՀՀ-ն առաջիններից էր նախկին Միաբնակյան հանրապետություններից, որ պատրաստակամություն հայտնեց անդամակցել այդ կազմակերպությանը և 1991թ. դեկտեմբերի 21-ին Այնա Աբա քաղաքում Ադրբեջանի, Բելառուսի, Վազախաստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Խուրքմենստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի,

<sup>4</sup> Տե՛ս E. Ю. Сергеев, *Новейшая история. Подробности 1945-1999*, М., 2000, էջ 499:

<sup>5</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1998, 11 փետրվարի:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը:

Ուկրաինայի և ՌԴ-ի հետ միասին ստորագրեց Անկախ Պետությունների Համագործակցության մասին համաձայնագրին կից արձանագրությունը, որտեղ վերը նշված պետությունները փաստում են, որ իրավահավասարության հիմունքներով ստեղծում են ԱՊՀ-ն:

Ալմա Աթայում ստորագրված արձանագրությունը, որ ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրի բաղկացուցիչ մասն էր, ՀՀ համար ուժի մեջ մտավ 1992թ. փետրվարի 18-ից<sup>1</sup>:

Ալմա Աթայի հռչակագիրը արձանագրության հետ միասին իրավաբանորեն առավել լիարժեք փաստաթուղթ է ԽՍՀՄ գոյությունը դադարեցնելու համար, քան ԱՊՀ ստեղծման մասին դեկտեմբերի 8-ի համաձայնագիրը:

Ալմա Աթայի հռչակագրում ԱՊՀ մասնակից պետությունները հայտարարեցին, որ «Համագործակցության մասնակիցների փոխգործունեությունն իրականացվելու է իրավահավասարության սկզբունքի, համակարգող ինստիտուտների միջոցով ձևավորված պարիտետային հիմքի վրա և գործող համագործակցության մասնակիցների միջև համաձայնագրերով որոշվող կարգով, որը ոչ պետություն է, ոչ վերպետական կազմավորում»<sup>2</sup>:

Հռչակագրում ԱՊՀ մասնակից պետությունները մեկ անգամ ևս փաստեցին, որ «Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծմամբ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը դադարեցնում է իր գոյությունը»<sup>3</sup>: Ինչպես ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրում, այնպես էլ Ալմա Աթայի հռչակագրում մի շարք կարևոր հարցերում, ԱՊՀ մասնակից պետությունները փորձում էին միասնական մոտեցում ցուցաբերել՝ ստեղծելու կամ, ավելի ճիշտ, պահպանելու միացյալ զինված ուժերը: Սակայն ԱՊՀ-ում տեղի ունեցած հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ դա անհնար է, քանզի ԱՊՀ մասնակից պետությունները այս հարցում հակասական դիրքորոշում ունեին: Ընդհանուր առմամբ ԱՊՀ ստեղծման առաջին տարիներին մասնակից պետություններից շատերը առավել հակված էին բոլոր խնդիրներում ընդհանուր լուծումներ գտնելու գաղափարին:

Այսպիսով, 1991թ. դեկտեմբերի 21-ին, Ալմա Աթայում ստորագրելով ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրին կից արձանագրությունը և Ալմա Աթայի հռչակագիրը, Հայաստանը ներգրավվեց ԱՊՀ ինտեգրացիոն գործընթացում: Իհարկե, ՀՀ-ի համար դա բնավ էլ պահի թելադրանքով ընդունված որոշում չէր: Դեռևս 1991թ. փետրվարին, այսինքն՝ Խորհրդային Միության փլուզումից և ԱՊՀ ձևավորումից տասը ամիս առաջ, Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, անդրադառնալով խորհրդային երկրի ճակատագրին, հայտարարել էր, որ «... խորհրդային ժողովուրդներն ապագայում, գուցե ոչ նույն կազմով ու ընդգրկմամբ, կգտնեն համագործակցության մի ներդաշնակ ձև: ...Խորհրդային Միության ապագան պատկերացնում ենք հետևյալ կերպ. միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող Անկախ Պետությունների Համագործակցություն, որտեղ բացառվում է միութենական կառավարության, ընդհանուր սահմանադրության և միասնական տնտեսության գոյությունը...»<sup>4</sup>:

Այդ էր պատճառը, որ ԱՊՀ ստեղծման առաջին իսկ օրից ՀՀ-ի նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ մասնակցելու է բոլոր այն ձեռնարկներին, որոնք ուղղված կլինեն ԱՊՀ անդամ երկրների տնտեսական ինտեգրացիային, համագործակցության մյուս ձևերին, և որոնք չեն հակասի ՀՀ-ի շահերին: Հայաստանը ԱՊՀ շրջանակներում փորձեց աջակցել նաև Լեոնային Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորմանը՝ շահագանգ կառուցողական դիրք ունենալով այն հարցերում, որոնք առնչվում էին ռազմաքաղաքական ոլորտին: Հայաստանի իշխանությունների դիրքորոշումն այն էր, որ ի դեմս ԱՊՀ-ի պետը է պահպանել և զարգացնել անվտանգության այն համակարգը, որը կար Խորհրդային Միության փլուզումից առաջ<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու...», էջ 14:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> «Հայաստանի Հանրապետություն», 1996, 16 մայիսի:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը:

Ի տարբերություն ԱՊՀ մասնակից այլ պետությունների՝ Հայաստանը առաջ քաշեց նաև ԱՊՀ-ի շրջանակներում բազմակողմ համագործակցությունից զատ երկկողմ, եռակողմ համագործակցության արդյունավետության թեզը՝ չիրաժարվելով ընդհանուր խնդիրներում կառուցողական մասնակցությունից: Որոշ պետություններ այս գաղափարը թերահավատությամբ ընդունեցին, բայց հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Հայաստանը չէր սխալվել:

Կարծում ենք, ԱՊՀ համակարգում տեղի ունեցած ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացներին ՀՀ մասնակցությունը համակողմանի ներկայացնելու համար անհրաժեշտ է այն դիտարկել ՀՀ արտաքին քաղաքականության համատեքստում: Դառնալով ԱՊՀ մասնակից պետություն՝ ՀՀ-ն ԱՊՀ-ին ինտեգրումը դարձրեց իր արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը, որը միանգամայն արդարացված էր:

Դրան զուգահեռ ՀՀ իշխանություններն ակտիվորեն սկսեցին համագործակցել արևմտյան պետությունների ու կազմակերպությունների հետ: Այդ քաղաքականության արդյունքը եղավ այն, որ ՀՀ իշխանությունները պետության կառավարման և տնտեսավարման խնդիրներում ապավինեցին արևմտյան հաստատություններին, իսկ ռազմաքաղաքական խնդիրներում՝ Ռուսաստանին և ԱՊՀ կառույցներին՝ մասնավորապես Հավաքական անվտանգության մասին պայմանագրին: Վարելով «ներգրավվելու քաղաքականություն»<sup>13</sup> ՀՀ իշխանությունները մասնակցեցին նաև արևմտյան անվտանգության համակարգերին, մասնավորապես ԵԱՀԿ-ին, որը կարևոր դերակատարում ունի ԱՊՀ տարածքում առկա հակամարտությունների (այդ թվում և Լեռնային Ղարաբաղի) կարգավորման գործում<sup>14</sup>: Բացի այդ՝ ՀՀ իշխանությունները համագործակցեցին ՆԱՏՕ-ի հետ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում<sup>15</sup>:

Աշխարհաքաղաքական զարգացումներին համընթաց՝ ՀՀ արտաքին քաղաքականությունը նույնպես որոշ կերպարանափոխությունների ենթարկվեց՝ որդեգրելով կոմպլեքսնորմալիզմը: Կոմպլեքսնորմալ քաղաքականությունը կառուցվում է այն համոզման վրա, որ մի քանի երկրների հետ հարաբերությունը չի կարող բացառել մեկ այլ շահագրգիռ երկրի հետ հարաբերությունը<sup>16</sup>: Հետաքրքիր է, որ կոմպլեքսնորմալիզմը օրենքի ուժ չստացավ, բայց կիրառվում է պետականորեն, և տարածաշրջանում շահեր հետապնդող պետությունները սկսեցին ուղղումներ մտցնել ՀՀ նկատմամբ իրենց քաղաքականության մեջ<sup>17</sup>:

1998 թ. սկսած ՀՀ իշխանությունների որդեգրած կոմպլեքսնորմալ արտաքին քաղաքականության շնորհիվ ՀՀ ակտիվորեն ինտեգրվում է և՛ ԱՊՀ-ին, և՛ եվրոպական կառույցներին՝ չհակադրելով դրանք միմյանց:

Իսկ ո՞ր մոդելն էր ընդունելի ՀՀ-ին ԱՊՀ-ին ինտեգրվելու համար: Ընդհանուր առմամբ պետությունների միջև համագործակցության զարգացման և ինտեգրացիայի բազմազան տարբերակները պայմանականորեն կարելի է դասակարգել խմբերի:

- Ինտեգրացիայի բարձրագույն ձև, երբ համագործակցող երկրները համագործակցության զարգացման համար բոլոր աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական, տնտեսական և այլ հիմնահարցերի համահավաք ներկայացման իրավունքը և խնդիրը վերապահում են համագործակցության բարձրագույն մարմիններին կամ կառույցներին:

<sup>13</sup> «Ազգ», 1997, 13 փետրվարի:

<sup>14</sup> St' u T. Hopmann, Building Security in Post-Cold War Eurasia: The OSCE and U.S. Foreign Policy- Peaceworks, Washington, 1999, series no. 31, էջ 33:

<sup>15</sup> St' u K. C. Гаджиев, Геополитика Кавказа, М., 2001, էջ 381:

<sup>16</sup> St' u Ն. Մկրտչյան, Հայաստանի արտաքին քաղաքականության հղացքի ձևավորումը՝ տնտեսությունը և պրակտիկան, «Հայաստանի Եվրոպայի ճանապարհին», Եր., 2005, էջ 248:

<sup>17</sup> St' u B. Д. Николаенко, Коллективная безопасность России и ее союзников. Военно-политическая интеграция на постсоветском пространстве, М., 2003, էջ 111:

Համագործակցության ինտեգրացիայի տվյալ մոդելի դեպքում համագործակցող պետությունների խումբը աշխարհաքաղաքական և տնտեսական կարևորագույն հիմնախնդիրների տեսանկյունից հանդես է գալիս արդեն որպես մեկ միավոր՝ ընդհանուր շահերով և վարվող քաղաքականությամբ:

- Ինտեգրացիայի միջանկյալ ձև, երբ համագործակցող երկրները համատեղ համագործակցության համար կարևորագույն հիմնահարցերի որոշակի շրջանակ են առանձնացնում և միայն տվյալ հարցերի ներկայացման իրավունքն են վերապահում համագործակցության բարձրագույն մարմիններին՝ իրենց պետությունների և ազգաբնակչության համար կարևոր այլ հարցերում վարելով ընդհանուր սկզբունքներով համաձայնեցված, սակայն ինքնուրույն քաղաքականություն՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ:

- Ներքին համագործակցության և ինտեգրացիայի զարգացմանն ուղղված տարբերակ: Տվյալ մոդելի պարագայում համագործակցող պետությունների ինքնուրույնությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտների, շատ բարձր է, և համագործակցությունը հիմնականում զարգանում է նպաստավոր միջավայրի և տնտեսական տարածքի ստեղծման ուղղությամբ՝ անդամ երկրների կողմից միմյանց բարենպաստ պայմանների տրամադրման ճանապարհով<sup>18</sup>:

ԱՊՀ անդամ երկրների ինտեգրացիայի հետագա զարգացման տեսանկյունից ՀՀ իշխանությունների քաղաքական վճիռը ուղղված էր ԱՊՀ շրջանակներում ՀՀ համար համագործակցության նախապատվելի և նպաստավոր տարբերակի կամ մոդելի ընտրությանը: Հարց էր առաջանում՝ արդյոք ՀՀ համար գերադասելի և շահավետ էր, որ ԱՊՀ-ն ներքին համագործակցությունից դուրս հանդես գար որպես մեկ միասնական ամբողջություն, և էթե այո, ապա ի՞նչ խորությամբ և աստիճանով:

1990-ական թվականների երկրորդ կեսին ՀՀ իշխանությունները գտնում էին, որ համագործակցության լավագույն մոդելը տնտեսության և կոլեկտիվ անվտանգության բնագավառներում միավորվելն է, որը հնարավորություն կտար լուծելու նշված բնագավառներում ծագող բոլոր հարցերը:

Ըստ ՀՀ իշխանությունների՝ ԱՊՀ շրջանակներում մերձեցման ձևերից պետք է լինել աշխատանքի միջպետական բաժանումը և դրա հնարավորությունների կիրառումը՝ արտադրության մասնագիտացումը, կոտպերացումը, փոխշահավետ առևտուրը, որոնք կխթանեն ԱՊՀ մասնակից պետությունների ընդհանուր ռազմավարական կտրագծերը իրագործելուն<sup>19</sup>: Իսկ ազատ առևտրի գոտու ստեղծումը հնարավորություն կտար ավելացնել հայրենական արտադրանքի արտահանումը, կնպաստեր աշխատանքների և ծառայությունների ազատ տեղաշարժմանը, ինչպես նաև ԱՊՀ անդամ պետությունների միջև վճարահաշվարկային և տնտեսության զարգացմանը խթանող համակարգի ձևավորմանը<sup>20</sup>:

ԱՊՀ շրջանակներում ինտեգրացիայի լուրջ խոչընդոտ էին ԱՊՀ տարածքում առկա հակամարտությունները: ՀՀ իշխանությունները գտնում էին, որ Համագործակցությունում գոյություն ունեցող հակամարտությունները պետք է կարգավորվեն բացառապես խաղաղ ճանապարհով: Սակայն դրա ապահովման համար անհրաժեշտ է խստորեն պահպանել միջազգային իրավունքի բոլոր սկզբունքները<sup>21</sup>:

Կարծում ենք՝ ԱՊՀ անդամ պետությունները հիմնադրման ամենակարգից արդեն պետք է ուղենշեին այդ կառույցի կազմավորման երկու հնարավոր խնդիրները՝ ռազմատնտեսական առավելագույն համագործակցություն, տեղեկատվական-մշակութային համագործակցության առաջնություն: Նման քաղաքականություն է վարել, օրինակ, Մեծ Բրիտանիան աշխարհի տարբեր երկրներում՝ Բելիզում, Հնդկաստանում և այլուր: Նախկին շատ գաղութներում, այդ թվում աշխարհի բազմազգ ժողովրդավարական Հնդկաստանում, անզլերենը երկրորդ պետական լեզու է հռչակվել:

<sup>18</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 2, գ.207, ք. 168:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, ք. 170:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, ք. 171:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, ք. 172:

Այդ եղանակով հնարավոր էր անհամեմատ ավելի արդյունավետորեն ու առանց զգալի ծախսերի պահպանել ԽՍՀՄ ժառանգության մի շարք կարևոր տարրեր, ինչպես նաև Ռուսաստանը հնարավորություն կունենար պահպանել ռուսական ազդեցությունը: Չէ՞ որ ռուսաց լեզուն, որին տիրապետում է մախկին ԽՍՀՄ տարածքի բնակչության ճնշող մեծամասնությունը, մշակութային-տեղեկատվական հզոր գործոն կարող էր լինել: Դրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ ԱՊՀ կառույցներում աշխատանքային լեզուն ռուսերենն է:

ԱՊՀ ստեղծումից հետո ՀՀ-ն սկսեց ակտիվորեն ներգրավվել գրեթե բոլոր կառույցներում, պաշտպանելով իր ազգային շահերը, որոնք առնչվում էին ԱՊՀ շրջանակներում ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցությանը: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով ԱՊՀ-ին, ակտիվորեն մասնակցում էր ինտեգրացիոն գործընթացին: Միաժամանակ Հայաստանը գործուն մասնակցություն էր ցուցաբերում նաև տարածաշրջանային և արտատարածաշրջանային միջազգային տնտեսական կազմակերպությունների աշխատանքներին և ծրագրերին՝ մասնավորապես, ՀՀ-ն անդամակցում է Սևծովյան տնտեսական համագործակցությանը և Եվրամիության երկու ծրագրերի՝ ՏՐԱՍԵԿԱ և ԻՆՈԳԵՅԹ, որոնք վերաբերում են այս տարածաշրջաններով փոխադրումների իրականացմանը և կարող են մեծապես խթանել Հայաստանի և ողջ տարածաշրջանի տնտեսության զարգացումը<sup>22</sup>:

Հայաստանը ԱՊՀ այն պետությունների շարքում է, որոնք 1991-2001թթ. ստորագրել են ռազմաքաղաքական և տնտեսական բնագավառի բոլոր հիմնարար փաստաթղթերը:

ԱՊՀ շրջանակներում ծավալած համագործակցության շնորհիվ ՀՀ-ն մախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ ունեցած հարաբերությունները որակական նոր հարթություն տեղափոխեց: Իսկ ռազմաքաղաքական ոլորտում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի անդամ պետությունների հետ սերտ ինտեգրումը ՀՀ-ին հնարավորություն է ընձեռում կոլեկտիվ ուժերով դիմագրավելու սառը պատերազմից հետո առաջ եկած մի շարք մարտահրավերների:

**Ж. С. МАНУКЯН - Внешняя политика Армении и интеграционные процессы в СНГ в 1991-2001 гг.** - В 1991 г. на постсоветском пространстве образовалась новая международная региональная организация — СНГ. После подписания 21 декабря 1991 г. Алма-Атинской декларации и протокола интеграция в СНГ стала для Армении внешнеполитическим приоритетом. Считалось необходимым сохранение в лице СНГ той системы безопасности, которая действовала до распада СССР, лучшей моделью интеграции признавалось объединение в военно-политической и экономической сферах, что предоставило бы возможность совместно решать проблемы. Однако становится очевидным, что старая модель ориентации не соответствует сложившейся в регионе новой геополитической обстановке. Опирайтесь только на свои силы также не представляется возможным, так как присутствие сверхдержав в регионе более чем ощутимо.

С 1998 года руководство РА в своей внешней политике провозгласило принцип комплиментаризма, что предполагает сохранение баланса отношений с Западом и Востоком. Наряду с тесной интеграцией в сфере военно-политического сотрудничества в рамках СНГ и ДКБ, Армения приняла участие в Западной системе безопасности и, в частности, в программе НАТО «Партнерство во имя мира». Армения также активно участвует в деятельности ОБСЕ, которая играет важную роль в деле урегулирования конфликтов на территории СНГ.

<sup>22</sup> Տե՛ս «Մալուխային զարգացման զեկույց, Հայաստան 1999», Եր., 1999, էջ 74: